

della forma e delle misure della costruzione». Egli tra il 1721 e il 1722 la riformò mediante la sopraelevazione delle navate laterali di un metro circa, il rinnovamento delle coperture che furono fatte al centro a volta a botte e ai lati piane a cantinelle, l'apertura di nuove finestre centinate, il rialzo del pavimento di un gradino in corrispondenza delle colonne verso il presbiterio, la tinteggiatura a marmorino bianco di tutto l'interno. I vari interventi di restauro dopo l'incendio, seppure attuati in maniera episodica e non sempre coerente, hanno tuttavia il merito di aver liberato la chiesa da molti elementi neogotici che ne facevano quasi un «falso», migliorando in tal modo la lettura del testo trecentesco come di quello settecentesco. L'aspetto del «gavit» il nartece delle chiese armene, è molto migliorato grazie al ripristino di un intonaco a marmorino bianco conforme a quello originario, mentre in chiesa si è optato per un marmorino di color mattone chiaro. Rimasta inalterata la navata centrale, le novità riguardano soprattutto le navate laterali grazie alla scoperta di elementi della chiesa gotica. Questi consistono in due arcate originali in corrispondenza delle sagrestie vecchia e nuova (gli estradossi in cotto hanno motivi ornamentali diversi), in quattro travi a cordone a dentelli, già infisse nei muri, e in quattro aperture rettangolari ad arco ribassato, distribuite due per parte. Probabilmente queste strane aperture, già munite di inferriate, avevano lo scopo di permettere ai lebbrosi di assistere alle funzioni religiose senza entrare nella chiesa; il rinvenimento di fondazioni di due corpi di fabbrica adiacenti alle navate laterali viene in effetti a corroborare tali ipotesi. Lavori di restauro sono ancora in corso nella sagrestia, focolaio dell'incendio e correttamente ricostruita, dove si sta pazientemente ricomponendo l'altare lapideo devastato dalle fiamme.

ՔԵՐՈՎԲԵԱԿԱՆ ՔՆԱՐ - ՀՈԳԵՂԵՆ ՏԱԻԻՂ

Այս տաճարին մէջ տապանաբար մը կայ սու մարմարեայ, բայց քափանցիկ է՝ ինչպէս հայկական աշխարհ, խորունկ՝ ինչպէս մեր ազգին հոգին: Այնտեղ Մխիթար քաղուած է. զինք շրջապատած են ոսկեղէն ձեղունքն ու մարմարէ որմերը, վանական շէնքեր, սպիտակ սիւներ, երգ եւ աղօթք, պարտէզներ եւ այգիներ: Սուրբը սուրբերուն մէջն է. հայը մեր շուրջառն ու վանական սիրտն ունի, միմալ չէ, սպիտակ ֆոզի մը մէջ պլլուած է, ինչպէս հարսն իր ոսկեհիւս ամսկին մէջ, ինչպէս աղօթքն երգով ամփոփուած:

Եւ այսպէս կը հաւատամ. այս է ճամբան որ զիս անսահմանին կը տանի: Մեզ ոչնչացնող բան չկայ. իմ հայրերս այսպէս հաւատացին եւ անմահութիւնը մեզի անուն ձրգեցին: Տարեք զիս այնտեղ՝ ուր սուրբ Ղազար անունով փոփրիկ կղզի մը կայ. օրհնուած հող ունի, ծուէն մը երկինք, ամպերէն կախուած տաճար մը՝ ոսկեղէն ձեղունով, հայ սուրբերու անունով դրոշմուած:

ՔԵՐՈՎԲԵԱԿԱՆ ՔՆԱՐ, ՀՈԳԵՂԵՆ ՏԱԻԻՂ...

Եղաւ ժամանակ՝ երբ անբեւոյժ Ոգի մը բռնեց իմ ձեռքէս. հրեշտակ էր, չեմ գիտեր. ինձ համար երկինքէն իջած Ոգի՞ էր, չեմ գիտեր. բռնեց իմ աչ ձեռքէս, ինչպէս հայրն իր որդին կը փաշշէ սար ու ձոր: Տարաւ ծովեր ու սարեր, աշխարհներ եւ ազգեր: Աչքերուս մէջ լաց չկար, սրտիս վրբան կասկած չկար: Աշխարհս ինձ համար մութ էր. սարերու հովիւի գաւակ էի. միայն սոյլերով եւ ծաղիկ ու կանաչութիւն հմայած էի: Անոյշ երգ մը իմ ականջներուս մէջ կը դառնար, կը հնչէր. աչքերս հայ երկինքին մաքուր կայսրն ունէին: Մեր գետերն ու լիճները ինձ համար մկրտութեան աւազաններ էին. եւ երջանիկ աշխարհի մը մէջ կ'ա-

պրէի. հիմա կ'երթայի օտար երկիր, անծանօթ մարդերու մէջ իմ հայութիւնս կը խառնէի: Գեղացիի զգեստ ունէի. բայց Աստուած ինձ կարեց ծիածանէ հագուստ մը. դրախտէն կ'ելլէի՝ ուրիշ դրախտ մը մտնելու համար: Հասայ կղզի մը մինակ եւ խոնարհ. ինչպէս վանական մը՝ աղօթքի մէջ ամփոփուած. երգ էր իր սրտին մէջ:

ՔԵՐՈՎԱԲԵԱԿԱՆ ՔՆԱՐ, ՀՈԳԵՂԷՆ ՏԱԻՒՂ...

Այդ սրբացած դամբանը Հայերուն ուխտավայրն է. մանուկ օրերէս ես տեսայ ծովէ ծով, սարէ սար երկարող Հայութիւն մը. մարդիկ մեզ բաժնեցին, Աստուած այստեղ մեզ միացուց: Հեռու եւ անծանօթ աշխարհներէն Հայեր եկած էին. մէկ մարմին, մէկ հոգի ունէին: Քաղցր լեզու մը մեզ կը կապէր, կը հասկնայինք մեր զգացումները. փառքի ըզգեստ էր մեզի համար անցեալ պատմութիւնը, հագուած էինք Աւարայրի արեւուն շողերը, Վարդանի հոգին, Ղեւոնդի հաւատքը. մէկ տան զաւակներ էինք: Հոն էր Հայաստան՝ ծայրէ ծայր, հոն էին Լուսաւորիչն ու սուրբ Ներսէս, Սահակ եւ Մեսրոպ հոգեղէն շուրջառ ունէին, դամբանի մը շուրջ ալի առած:

— Քալէ՛ դէպի առաջ, ըսաւ աներեւոյթ Ոգի մը, ելի՛ր սանդուղներէն. կօշիկներդ հանէ. հոս սուրբ է, սրբութեան մասունքներ ցանուած են, արիւն ցանուած է, հայ մարտիրոսներուն սրտերէն:

Կապոյտ երկինքէն աւելի ես ապշած մնացի այդ դամբանին վրայ. իմ աչքիս առջեւ գունագեղ մարմարները արժէք չունէին: Երկինքն ինձ հետ էր, ես երկնքին հետ. Աստուած Հայ մը կը փառաւորէր. հրեշտակներուն ձեռքը Գողթնի քնար տուած էր:

ՔԵՐՈՎԱԲԵԱԿԱՆ ՔՆԱՐ, ՀՈԳԵՂԷՆ ՏԱԻՒՂ...

Ծնրադրեցի գետին, ճրագներ վառեցի, սիրտս բռնեցի. ան ուժգին կը տրոփէր: Ճակատս սեւ մարմարին դրի. աղօթք էր իմ շարժումս. երազ էր իմ աղօթքս: Ո՞ւր կարելի էր գտնել այսօր հոգեւորոգ դամբան մը: Ես մինակ չէի, աշխարհացրիւ ազգ մը իմ հետս էր. ան աստղերու պէս հաւաքուած էր այդ դամբանին շուրջ, հոն միլիոն միլիոնի վերայ Հայութիւնը կար, քաղաք քաղաքի հետ էր, վանք վանքի քով էր, ինչպէս երեսակայութիւնը գիտէ աստղերն իրարու մօտ հաւաքել:

— Կը հաւատամք մէկ Հայութեան, աղաղակեց ամբողջացած ժողովուրդը:

ՔԵՐՈՎԱԲԵԱԿԱՆ ՔՆԱՐ, ՀՈԳԵՂԷՆ ՏԱԻՒՂ...

Երազ չէր իմ առաջին այցս՝ այդ հոգիացած դամբանին. մէկը կար, դէպի երկինք կը նայէր. իր աչքերը խոնաւացած կապոյտ ունէին, հոգ չէր՝ հոգին տակ, կը սպասէր փառաւոր յարութեան: Խռոտ մատեան մը ունէր իր գրկին մէջ. Աստուծոյ խօսքը անմահացած էր, քերթուածներ կային իր շրթներուն վրայ: Կապոյտ ուրախութեամբ մը հոգին լեցուած էր, Աւետարան մը ունէր՝ ամբողջովին հաւատք եւ իմաստութիւն: Այն Աւետարաններէն էր՝ որ տառ առ տառ ոսկի գիրերով իրարու մօտ հիւսած էին դարեր առաջ Մեսրոպն ու Սահակ:

ՔԵՐՈՎԱԲԵԱԿԱՆ ՔՆԱՐ, ՀՈԳԵՂԷՆ ՏԱԻՒՂ...

Այս կղզին մէջ ծաղիկներն հոգի առին, վարդերը խորան եղան, մարդիկ հոգեղէն էակներու փոխուեցան: Ոչ լաց կայ, ոչ քերի հաւատք: Կու գան դարձեալ. այսօր ալ, վաղն ալ պիտի գան Աւետարանի հաւատքն ունեցողներ: Ձեռքերն ինձ կայ, իրենց աչքերը երկինքով լեցուն է, հաւատք ունին, քրիստոնեաներ են:

— Հա՛յր, օրհնութիւն մը տուր:

Ո՛րքան ցաւեր տեսած եմ, ո՛րքան արցունքներ սրբուած. մէկը կայ այդ դամբանին տակ պառկած, որ անձրեւի պէս երկինքէն օրհնութիւն կը ցօղէ. փոքրիկ աղօթքներ, հաւատքի փշրանքներ պէտք են իրենց ցաւերուն համար. մայրեր են, զաւակներ գրկած. մրմունջներով սանդուղներէն վեր կը բարձրանան:

— Օրհնութիւն մը տուր, հա՛յր սուրբ, յանուն Միսիքարի... Կ'աղերսեն: Ո՛վ գիտէ ի՞նչ ցաւ ունին, ի՞նչ քշուառութիւն իրենց հոգին կը սարսէ: Թերեւս անկողինին մէջ փոքրիկ զաւակ մը ձգած են, քերեւս տան մէջ պատառ մը հաց չունին, քերեւս պատուհանով տուն չունին: Միսիքար մարդկային փոքրիկ հրաշքներու պաշտպան է: Ինքն ալ վրէժալից ապրեցաւ, ո՛րքան աղփատ օրեր անցուց, ձեռք չկարկառեց, հաւատք ունեցաւ: Այսօր ալ կը սիրէ երկինքէն իջնել՝ քշուառ մը միսիքարելու համար: Ան շանթալից հրաշքներ չի կատարեր, այն սուրբերուն կը նմանի՝ որոնք աղփատներուն ծածուկ կ'ողորմին:

Քրիստոնեական վիշտը հոգեւոր աղօթքով կը բուժուի. երգը բալասան է, միմունջը զոյում է: Այն ատեն սրտերը կը բացուին՝ երբ ափ մը լոյսով իրենց դէմքերը կ'օծեն:

ՔԵՐՈՎԱԲԵԱԿԱՆ ՔՆԱՐ, ՀՈԳԵՂԷՆ ՏԱԻԻՂ...

— Հա՛յր, օրհնութիւն մը տուր: Կու գան ծերունին եւ պառաւը, քոռներուն համար կու գան. բժիշկն անկարող եղած է անոր կարմիր հագը բուժելու, դեղ չունին, լաց ունին, մանուկը սրտի պէտք ունի:

— Հա՛յր, օրհնութիւն մը տուր: Հիւանդ տունն հրաշք կ'ուզէ, աղատ տունն հաց կ'ուզէ. տանիքէն անձրեւ կու գայ. քերես վաղը տունէն պիտի վտարեն, տալու վարձք չունին: Տունէ տուն ապաստանած է նաեւ Միսիքար. հօրեմական տանիք մը չունէր. աղատ երեսներուն սիրոյ համբոյր չէր առած: Այսպէս եւ մարդիկ իրենց փոքր ու մեծ ցաւերն հաւաքած, այդ ննջեցեալին կը դիմեն, աղօթք ու շարական մը մնջելով:

ՔԵՐՈՎԱԲԵԱԿԱՆ ՔՆԱՐ, ՀՈԳԵՂԷՆ ՏԱԻԻՂ...

Հիւանդ տունը սիրոյ խօսք կ'ուզէ, աղօթք կ'ուզէ. աղատ ձեռքեր հաց կը խնդրեն: Ես տեսայ պատառոտուն ձրկնորսներ. դրամ չունէին վտիտ մում մ'իսկ վառելու. վիշտ շատ ունին, հացի կարօտ են: Երբեմն հայազգի մը կու գայ՝ Միսիքարի ռոֆն համբուրելու համար: Հայը գիտէ քէ Միսիքար Հայերու կը սպասէ. անոնց մոմերուն լոյսը՝ մեր Լուսաւորչի կանքեղին նման է: Ու Միսիքար կարօտով իր ազգակիցներուն կը սպասէ:

Այս դամբանին մէջ որքան խորհուրդներ քաղուած են. միայն հայ ազգը գիտէ կարդալ զանոնք: Ո՞ր հրաշքը բերաւ այս օտարութեան մէջ մեծ առաքեալը, ազգի մը մեծ հայրը. չոր ոսկրով դամբան չէ ասիկա. Ղազարու քարայրն է. Աստուծոյ ձայնը կը բալէ՝ զինք լոյսին բերելու համար:

Միմակ չէ, փտած դագաղ չէ: Իր շուրջն ոսկեղէն պսակի նման շարուած են դարաւոր էջմիածիւնը, Հաղբատն ու Սանահինը, փառքի Տաքեւն ու աղօթք դարձած ձեռագիրներու Սկեւոան, աստուածաբան Գլաճորը, Դրագարկն ու Հոռմկլան: Կարօտով հոն են Կարինի Կարմիր վանքը, Սեբաստիոյ Սուրբ Նշանը: Այս ամէնը իննականեան վանքէն հոգի առած են, եւ պատմական հրաշքով կը պատեն սեւ աղամանդէ այս դամբանը:

Բոլորը հոն են, հազարաւոր վանքեր, որոնք Միսիքարի աչքերուն մէջ աղօթք դարձած էին, Սեւանի տեսիլք եղած էին: Հազարաւոր վանքեր, հոգեշէն տանարներ, որոնք տակաւին կը շրջին աւերակներու մէջ: Բոլորը տեսիլքի նման հոն են, իրենց խաչքարերով, քարացած աղօթքներով, կոչնակներով: Հին օրերուն պէս վանական երգերն ու շարականները դարձեալ կը լսուին, ինչպէս ստրված էր Միսիքար 300 տարիներ առաջ. սրտին մէջ զանազան ծրարած, եկած էր այս կղզիին մէջ՝ հրեշտակներուն հետ երգելու...

ՔԵՐՈՎԱԲԵԱԿԱՆ ՔՆԱՐ, ՀՈԳԵՂԷՆ ՏԱԻԻՂ...

Ո՞ր վանքին մէջ ազգի մը սիրտն ու հայրենի հաւատը դարեր ու դարեր կ'ապրին՝ իրար գրկած: Հոս աղօթքն ու հայկական փաղցր երգն իրարմէ կը բխին, մարդիկ ազգային հոգիով կը մօտենան իրենց խորաններուն: Հեռուներէն եւ այլազան աշխարհներէն կու գան, ո՞ր մէկ անունը տամ, ո՞ր ծովն աշխարհի մը կ'ապրէ, քափառական հայուն տունը գրտնելու համար:

Դամբանի մը առջեւ ծնրադիր՝ երկինք կը նային, աղօթքի տաղերով ձեռնամաժ, եւ Աստուած կաթիլ կաթիլ լոյսէ անձրեւ կը ցօղէ համայնասփիւռ ազգի մը:

Երանի՛ այն ազգին՝ որ իր տան մէջ անմահ անուն մը ունի. իր դաւանական աղօթքներուն մէջ Աստուած կը շնչէ, Հայրապետներ կը բարբառին: Իր Շարականներուն մէջ ամէն օր Աստուած հրեշտակներով կը յայտնուի: Մէկ պատմութիւն ունին՝ ողջ եւ մեռած, մէկ երգ ունին.

— Յոյս իմ ես դու, Տէր:

ՔԵՐՈՎԱԲԵԱԿԱՆ ՔՆԱՐ, ՀՈԳԵՂԷՆ ՏԱԻԻՂ...

Տարիները կ'անցնին եւ հայ ժողովուրդը բարձրագոյն կը դիմէ դէպի իր փառաւոր ապագան:

Ամէն կողմ Արարատ կը տեսնեն, ամէն կողմ Լուսաւորիչ եւ Վարդան կ'երագեն: Իրենց գլուխներուն վրայ ոսկի խաչերը կը փայլին, ոչ մէկ բարբառոս ձեռք խաւար քաշած է հայ հոգիներուն վրայ:

Ստէպ կը հաւաքուին սեւ աղամանդէ մարմարին շուրջ, ծերունին ու մանուկը. կը հաւաքուին մոմերը: Տանարն արքայութեան կը փոխուի, ոչ ոք կայ տրտում. հայն է հոն կանգնած՝ Միսիքարի եւ իր հին ու նոր զաւակներուն հետ:

Հայն իր Աստուածն ունի, իր սուրբերն ունի: Հոն դարձեալ կը լսեն Միսիքարի փարոզը՝ ինչպէս Յիսուսի լերան պատգամները: Սէրը կու գայ զիրենք անմահացնելու: Ու դարեր անցան այն օրէն՝ երբ այս դամբանն Յիսուսի խորան դարձաւ, Տիրամօր ձեռքը դպաւ անոր. հրեշտակները վրան գրեցին:

ՔԵՐՈՎՐԷԱԿԱՆ ՔՆԱՐ – ՀՈԳԵՂԷՆ ՏԱԻԻՂ

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՍԵՒԱՆԷՆ Ս. ՂԱԶԱՐ

ԱՌԱՐՈՑ ԼՈՒՍՈՅ

ԱՌԱՐՈՑ ԼՈՒՍՈՅ

Ճառագայթ մ'ինկաւ իմ դէմքիս վրան,
Պատուհանս է բաց, իմ սիրտս է ամառ,
Հողիս՝ պաղատանք, լուսեղէն օրուն.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Թռչուններու հետ կու գայ այգաբաց,
Ամէն կողմ բոյն է, հրճուանքն աւլըցուն.
Քրիստոնեայ է միշտ տիեզերքն անծայր.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Քարը ձեւ առաւ, գոյն գոյն ծաղիկներ,
Լոյսին մէջն ալ կայ շնորհք սրբարար.
Իրեն գեղն արդէն նըւագ է ու սէր.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Ի խորոց սրտի՝ խօսք ընդ Աստուծոյ,
Երկինք եւ երկիր կը կանչեն իրար,
Ամէն սիրտ ունի նոյն շողը սիրոյ.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար: